

**ՀԱՎԵԼՎԱԾ 2**

ՀՀ ԿԳ նախարարի

26 հունվարի 2007թ. N29-Ն հրամանի

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍՄՅՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ

	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՐԵՆԱՆԵՐԻ ԹԻՎԸ
1.	Ընդհանուր նշանակության նախադպրոցական հաստատություններում /մանկապարտեզներում, որտեղ իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովվում է երեխաների խնամքը/ մինչև 1 տարեկան 1-ից 3 տարեկան 3-ից 6 տարեկան	10-15 15-20 25-30
2.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական և հոգեկան զարգացման շտկողական աշխատանքների կարիք ունեցող) երեխաների թվի ծանրաբեռնվածության առավելագույն խտությունը սահմանվում է՝ մինչև 3 տարեկան խոսքի ծանր խանգարումով երեխաների համար. լսողության, տեսողության և մտավոր հետամնաց երեխաների համար. հենաշարժական ապարատի խանգարումով երեխաների համար.	մինչև 5
	բարդ արատներով 3-6 տարեկան խոսքի խանգարումով երեխաների համար այդ թվում՝ խոսքի ծանր խանգարումով երեխաների համար, լսողության խանգարումով երեխաների համար, տեսողության խանգարումով երեխաների համար,	մինչև 7
	լսողության խանգարումով, մտավոր հետամնաց երեխաների համար, հենաշարժական ապարատի խանգարումով, բարդ արատներով երեխաների համար,	մինչև 7

	ընդ որում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ինտեգրվում են ներառական կրթության մեջ բնականոն զարգացումով երեխաների հետ:	
3.	Թույլատրվում է ազգային փոքրամասնության երեխաներով խմբերի գործարկումը թերկոմպլեկտավորված համակազմի խտությամբ:	8-10

4. Ելնելով տեղական պայմաններից և առանձնահատկություններից, հիմնադրի կողմից կարող են սահմանվել երաշխավորվածից ցածր խտությամբ դաստիարակչական խմբեր՝ հիմնադրի կողմից լրացուցիչ բյուջետային միջոցների առկայության դեպքում:

5. Թույլատրվում է սահմանամերձ գոտում, գյուղական, բարձրադիր և հեռավոր վայրերում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից խմբերի համալրման կարգում կիրառել տարբերակված մոտեցում՝ ելնելով բնակչության պահանջարկի հաշվարկից և համայնքի բյուջեի հնարավորություններից: